

20 Ն,

(Հ. Բ. Ը. Մ. ի մեծ ընտանիքի

բոլոր անդամներուն)

(75ամեակի առիթով)

Արեւելեան կողմն աշխարհի
 Ծնար դուն օր մը բերկրալի,
 Զուրերուն մօտ Մայր Նեղոսի:
 Սասար հղար ամէն հայու
 Կարիքներուն ծովածաւալ,
 Եւ Միութեան խորհրդանիշ
 Զիրար սեղմող ձեռքեր երկու,
 Բառեր երեք՝ «Եղբայր եմք մենք»:
 Այդ օրերուն ժողովուրդը
 Կ'ապրէր դեռ իր հողին վրայ,
 Իրար խառնած ճագնապ, կսկիծ:
 Սակայն պահը կը հասուննար
 Մեծ Ոսոխի սալաքանդներուն,
 Եւ Ապրիլեան օր մը խաղաղ
 Քեցց ճարաւ տունը հայուն՝
 Ուշադրեցին չորս ծագերուն...:
 Դուն օգնութեան եկար նորէն
 Բեկորներուն մեր ցիրուցան:
 Վերածնունդ Հայրենիքին
 Բացիր նոյնպէս ձեռքդ բարի,
 — Նոր օրերու լամարացի, —
 Մշուհներուն մէջ տառապող

Մեռել սպասող պարապ դագաղ,
 Անլեռ ցամաք, անալիք ծով ու անաղ
 Ունծուիս կրակ, ձորձ հնամառ: [հաւ,

Վիշքը կայ միշտ,
 Բայց անոր դէմ ե՞րբ է որ մենք
 Սերը դնել պիտի գիտնանք
 Մեր սրտերուն իբրեւ վաղանք:

Գ. ՀԱՐՏԱՐ

Բեկորներուն մեք Սփիւռֆի,
 Բերիք բարիք եւ օրհնութիւն
 Արեւելէն ընկն արեւմոս:
 Բազմացոցիք դուն դպրոցներ,
 Եկեղեցի, ակումբ, մամուլ,
 Որ չձուլուէր հայը կրկին
 Ճերմակ ջարդէն անեղածին...:
 Սասարեցիք դուն տակաւին
 Գրին, գրչին, մեակայթին,
 Նկարիչին, երաժիշտին,
 Ինչպէս Նեղոսն Եգիպտոսի,
 Որու ավին օր մը ծընար
 Իբր սփոխանք մայրագործի
 Ժողովուրդին մեր տարագիր:
 Կը քալես արդ հակասաբաց,
 Հաստատակամ ու անպահով,
 Ու հովերուն, խորակներուն
 Դէմ միշտ կ'ըլլաս բումբ անխռով:
 Քեզ կը մաղթեն նոր երթ բարի,
 Միշտ դէպի վեր, դ՛պի յառաջ,
 Նոր դասիններ յաջողութեան,
 Աղամանդեայ յոբելանիդ
 Առջեւն կեցած եւ ծնրապիր:

ՆԱԶԱՐԷԹ Պ. ԶԱՓԱՏԱՐԵԱՆ

Աղեփանդրիա, Եգիպտոս

Մայիս 1981

